զանազան փորձանս պատահելոցն, ոչ կարացեալ տանել զայն հանդուրժելի զյուզմունս մրրկացն նաւուն՝ քայքայէր և զանձինս ղ և Լ ի ժողովրդենէ անտի թօթափէր ի ծով, ի ծովածուփ կենցաղոյս ազատեալք գոհութեամբ ընկալեալ զվրտանգ ջրասուզին քաղելով շնչիցն՝ աւանդման հոգւոյն, մտանէին յայն հանգիստ ըստ քառասնիցն։ Բայց սակայն աղէ ընդ աղէտն տեսանել թէ ով տայր առնել նոցա զպատկանաւորն կտակ և ի թողուլ միմեանց զանցումն։ Ո՞վ տայր նոցա պատրաստել զթոչակ՝ անդառնալի ճանապարհին ուղեգնացութեան։ Ո՞վ յուսագրէր զահաբեկեալսն ծովասփիւռս, մերձ ի հեղձումն։ Ո՞վ բաժանորդէր զպատանսն ծածկելով զմերկութիւն նոցա։ Ո՞վ հրաւիրեալ մերձենայր առնել զթաղումն օրինաւոր։ Ո՞վ մատուցանէր զօրհնեալ հող յամփոփումն անձանց նոցա։ Ո՞վ տեսեալ ողբայր զնոսա արժանաւոր սգով։ Ո՞վ զնժդեհացեալսն յօտար աշխարհի պատշաճ վարկանէր թաղել ի գերեզմանս օտարաց։ Ո՞վ ոք մխիթարէր զվշտացեալսն ի կամս Տեառն օրհնելոյն իբրու մահու հասարակաց։ Այլ փոխանակ այսց ամենայնի, ըստ Եսայեայ իբրև զոչխար կորուսեալ եղև ժողովուրդն. առիւծք մերժեցին զնոսա, մոլորեցուցին զնոսա ի լեռնէ ի բլուր, մոռացան զմակաղատեղս իւրեանց. թշնամիք նոցա ասացին մի՝ ներեսցուք նոցա. ցրուեցան ի միմեանց այր և կին. տարանջատեցան ընտիրն և կոյսն, հովիւն և հօտն, ծերն և երիտասարդն, և հասարակաբար ջնջեալք ծածկեցան ի տեսլենէ աչաց. ընդ ալեօք ծովուն տարուբերեալք նուաղէին ի շնչոյն, և զսուգն անփարատելի յաւիտենական թողին մնացորդաց ժողովրդեան՝ յորժամ լուան զբօթ բեկման ժողովրդեան. խոցեցան սրտիւք ընդ պակասելն սիրելեաց. յաղթահարեցան երկնօք ծննդականի ընդ անջատիլն յազգատոհմէ և ի բարեկամաց. մորմոքեցան լի սրտովք ընդ տարագրիլն կուսանաց. ամենեցուն զլուխ խցաւ և ամենայն սիրտ ի տխրութեան, ձեռք զմիջօք և զծնօտիւք, ողբս առեալ աշխարէին. փափուկքն որ նստէին յանձնապատան պերճութեան, արդ նստան յայրութեան և զստրկութիւն ծանեան, զի յանկարծակի եհաս ի վերայ նոցա այրիութիւն և անզաւակութիւն։ Զայս ամենայն իբրև լուաւ այսր ժամանակիս այրն երևելի Աբրահամ Զելեպին կոչեալ Պելիկրատցի, որ նստէրն յԱնդրիանուպոլիս ի դուռն արքունի վաճառականութեան, սկսաւ վշտանալ ընդ վըշտացեալսն ժողովրդեան գամենեցուց յօտար ի վայրսն պանդխտութեան դեգերելոցն. ինքն ևս կոչեալ զերևելի արսն, որք կային յԱդրիանուպոլիս՝ արգահատեալ մխիթարէր և պարգևեաց վարատելոցն չքաւորաց փութապէս հասուցանել օգնութիւնս՝ զչորս հարիւր ղուռչ, այց առնելով ի նեղութեան. և ծանօթացեալքն Աբրահամ Զելեպու որ ի ժողովրդենէ անտի, առեալ զպարգևն զայն հասուցեալ ի Ղալաթա և ի Սիզուպոլիս բաժանորդեալ կարօտելոցն։ Որոց յայնմ վայրի եհաս հրաման ի թագաւորէն թէ ուր և իցեն ժողովուրդք հայոց կամենիցոյ զետեղեսցին, ստանալ տունս բնակութեան. և սակաւ ոգիացեալք լինէին մնացորդք ժողովրդեանն ի պարգևաբաշխութենէ Աբրահամ Զելեպուն ի պէտս ծախուց ճանապարհին բաւականացեալք իբրև յԱստուծոյ բարերարէն համարեալ զայն շնորհ և ողորմութիւն։ Եւ . . . . դարձեալ հասին ի Փիլիպուպոլիս. իբրև գտին մնացորդքն զմիմեանս, սկսան մին խնդալ և միւսն լալ։ Ընդ ուրախութեան՝ արտասուացն բխմունք. ընդ բժշկութեան բեկման՝ողբս հիւսեալ առատանայր. ընդ զրկանացն համբուրից՝ գոչիւն լալոյ բարձրանայր. ընդ բաղձանացն լրացելոց՝ փղձկանս սրտից յորդորէր։ Ընդ միմեանս ողջագուրելոյն՝ ազազակս հեծեծանաց յոլովանայր, ընդ տեսիլն միմեանց մխիթարութեանց՝ հեկեկանս հառաչանաց յերկարէր։ Անդ յիշումն սրբոց Սիոնին և նուազ կարդալ։ Անդ յիշումն պակասելոցն ի ցամաքի և ի ծովու, աղբիւրք յանդնդոց բխէին։ Անդ ի խղճէ որբոց և այրեաց նժդեհութեան տառապանաց ի հարցն և ի պատասխանիսն միոյն յոգոց հանել և միւսոյն նուազիլ։ Անդ էր նորոգումն ազատից ի ցաւս կսկծաբերս վասն ազգատութեան ժամանելոյ և յեկեղեցիս քաղաքաց և ընդ դրունս քրիստոնէից դեգերեալ աղէկզ և յոգնապատկաւ դիմօք, դարձեալ տնանկք ամաչեցեալ ըստ մարգարէին։ Անդ բախմունք կրծից առնուլ պատգամ վասն մանկանց և երիցուհեաց և կուսանաց գեղեցկաց զբաժանորդեալս ի յարկս հայոց, յորոց և տակաւին կան մինչև ցայսօր ի գաղթականութեան. զիա՞դ համբերեցից հակիրճ անցանել ընդ անցս վշտակրութեանց։ . . . . . Քանզի յորժամ ժողովեցան ի Փիլիպուպոլիս ասելով թէ անցոյց Տէր զբարկութիւն իւր զմեզ, և թէ անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր և հաներ զմեզ ի հանգիստ՝ հնարել չանալով յետս ընկրկել զխիղճ մտացն յարուցմունս, զմտաւ ածելով զնախնեացն զվտանգութիւն, յիշելով զհանդիսաղիր նահատակսն՝ որ վասն անուանն Քրիստոսի, ընթեռնլով զփորձանս համբերահօրն Յոբայ, յանկարծակի եղև